ԲԱՐԻ՛ ՃԱՆԱՊԱՐՀ

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ

Անցնում է ուրախ երամն այլ աշխարհ.
Ա՛խ, երանի՜ ձեզ, ազատ թռչուններ,
Լայն և ընդարձակ օդում ձեզ համար
Չը կան ոչ սահման և ոչ արգելքներ։
Բարի՜ ճանապարհ. շուտով այլ երկրում,
Ուր նոր են բացւում ծառեր ու ծաղիկ,
Նոր բոյն կը շինէք կանաչ անտառում
Ու կը մոռանաք դուք հին հայրենիք։

Անցնում է այլ խումբ... վաստակած, անձայն
Հազիւ փոխում է նա դանդաղ քայլեր,
Նորա առաջին կանգնում է սահմանն,
Կանգնում են ձիւնոտ սարեր ու ձորեր.
Եւ նա իւր ծերուկ հին հայրենիքում
Չի գտնիլ մի ծառ, մի թսւփ կանաչով,
Ու բոյն կը հիւսէ, գուցէ սառն հողում,
Բայց նա՛ էլ, նա՛ էլ գընայ թող բարով...

Հոկտեմբերի 4. 1890 Թ.